

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով, սույն թվականի նոյեմբերի 10-ին Մայր Աթոռ ժամանեց ռուսաց պրավոսլավ եկեղեցու հովվապետ, Մոսկվայի և Համայն Ռուսիո նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը:

Սրբազան Պատրիարքին ուղեկցում էին Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի նախագահ, Տուլայի և Բելևի միտրոպոլիտ տ. Յուվենալին, Վոլոկոլամսկու արքեպիսկոպոս տ. Պիտիրիմը և շքախմբի չորս այլ անդամներ:

Նոյեմբերի 10-ին, ժամը 14-ին, Երևանի օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին ողջունեցին Ամենայն Հայոց Հայրապետը, Մայր Աթոռում հյուրաբար գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսները, վարդապետները և պաշտոնեությունը:

Համայն Ռուսիո Պատրիարքին օդանավակայանում դիմավորեցին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Երկու Հայրապետները, շրջապատված իրենց հետևորդներով, հանդիսավոր շքերթով ժամանեցին Մայր Աթոռ, ուր Իջման սուրբ սեղանի առաջ փոխանակեցին ողջույնի ջերմ խոսքեր:

Նոյեմբերի 11-ին երկու Հայրապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան ժամերգությանը, ապա՝ հոգևոր ճեմարանում իրենց պատվին կազմակերպված հանդեսին:

Նոյեմբերի 12-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը Մայր տաճարում մատուցեց ս. պատարագ, որի ընթացքում երկու Հայրապետները հանդես եկան եղբայրական սիրո փոխադարձ բարեմաղթություններով:

Ս. Պատարագից հետո Վեհարանի գահասրահում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն՝ ի պատիվ ռուս բարձրաստիճան հյուրերի: Ջերմ ուղերձով հանդես եկավ Հայոց Հայրապետը, որից հետո պատասխան ճառով Իր խոսքն ասաց ռուսաց եկեղեցու Հովվապետը:

Հետևյալ օրը, նոյեմբերի 13-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ մեծարգո տիար Բ. Մուրադյանն ընդունեց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին, Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, Երուսաղեմի

հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսին, ինչպես նաև արտասահմանից Մայր Աթոռ ժամանած հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին:

Ժամը 14.30-ին «Արմենիա» հյուրանոցում, ի պատիվ հյուրերի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ հայ եկեղեցու գործերի խորհրդի կողմից:

Երեկոյան երկու Հովվապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան պաշտամունքին և միասին աղոթեցին քրիստոնեական սիրո ու եղբայրության ամրապնդման և աշխարհի խաղաղության համար:

Եկեղեցական արարողությունից հետո տեղի ունեցավ հոգևոր երաժշտության համերգ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ:

Մայր Աթոռում գտնվելու օրերին մեծահարգ հյուրերը, Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, այցելեցին Մայր տաճարի և Հին Վեհարանի թանգարանները, Երևանի Մատենադարան, ս. Գեղարդ վանք, «Էրեբունի» թանգարան և Մեծ եղեռնի հուշարձան, ուր միասին աղոթեցին և զետեղեցին ծաղկեպսակներ:

Նոյեմբերի 14-ին, երեքշաբթի օրը, ռուսաց պրավոսլավ եկեղեցու Հայրապետը և շքախմբի անդամները հրաժեշտ առան Հայոց Հայրապետից:

Օդանավակայանում հարգարժան հյուրերին ճանապարհեցին Վեհափառ Հայրապետը, Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը:

Օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին բարի ճանապարհ մաղթեց նաև մեծարգո տիար Ս. Գասպարյանը:

Ռուսաց եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հանդիպումը Մայր Աթոռում հանդիսացավ երկու պատմական եկեղեցիների սերտ կապերի վառ արտահայտություններից մեկը՝ էկումենիկ համագործակցության ոգով:

Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը Հայոց Հայրապետին սիրով հրավիրեց Մոսկվա իբրև Իր հյուր: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունեց այդ հրավերը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

15-ը նոյեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին